

# ՀԱՅ ՈՍԿԵՐԻՉՆԵՐԻ ԱՐԴԻ ԿԱՐԳՈՒՄՆԵՐԸ

*Posted on April 23, 2013 by Keghart*



Category: [Opinions](#)



## Հարցազրույց`

Հայ Ոսկերիչների Միության (AJA) Եվ «Էստետ» Ոսկերչական Տան (Ռուսաստան) Լախազահ`Գազիկ Գեւորգյանի Հետ

Համո Մոսկոֆեան, Մոսկվա-Բեյրութ, Ապրիլ 2013

**ՀԱՐՑՈՒՄ.-** Ե՞րբ և ի՞նչպես է ստեղծվել Armenian Jewellers' Association-ը (AJA) և որո՞նք են նպատակները:

**ՊԱՏԱՍԽԱՆ.-** Հայ Ոսկերիչների Միությունը պաշտոնապես ծնվել է Երևանում 1997 թ. Սեպտեմբերի 19-20-ին (անցյալ տարի նշվել է ծննդյան 15-րդ տարեդարձը), Հայաստանի Հանրապետության կառավարության և Սփյուռքի հայրենասեր ոսկերիչների համատեղ նախաձեռնությամբ ու ցանկությամբ:

Այսպիսի միության գաղափար միշտ էլ եղել է Հայաստանում և Սփյուռքում: Չարմանալի չէ, նկատի առնելով հայերի ավանդական ներգրավումը միջազգային ոսկերչական արդյունաբերության և ոսկերչության զարգացմանը Հայաստանում:

## Հարցազրույց`

Հայ Ոսկերիչների Միության (AJA) Եվ «Էստետ» Ոսկերչական Տան (Ռուսաստան) Լախազահ`Գազիկ Գեւորգյանի Հետ

Համո Մոսկոֆեան, Մոսկվա-Բեյրութ, Ապրիլ 2013

**ՀԱՐՑՈՒՄ.-** Ե՞րբ և ի՞նչպես է ստեղծվել Armenian Jewellers' Association-ը (AJA) և որո՞նք են նպատակները:

**ՊԱՏԱՍԽԱՆ.-** Հայ Ոսկերիչների Միությունը պաշտոնապես ծնվել է Երևանում 1997 թ. Սեպտեմբերի 19-20-ին (անցյալ տարի նշվել է ծննդյան 15-րդ տարեդարձը), Հայաստանի Հանրապետության կառավարության և Սփյուռքի հայրենասեր ոսկերիչների համատեղ նախաձեռնությամբ ու ցանկությամբ:

Այսպիսի միության գաղափար միշտ էլ եղել է Հայաստանում և Սփյուռքում: Չարմանալի չէ, նկատի առնելով հայերի ավանդական ներգրավումը միջազգային ոսկերչական արդյունաբերության և ոսկերչության զարգացմանը Հայաստանում:

Ես AJA-ի անդամ եմ եղել 2005 թ.ից և միշտ հիացել եմ հիմնադիր հայրերի ակտիվությամբ և վարքով:

Երկրորդ մեծագույն խորհրդաժողովը տեղի ունեցավ Հոկտեմբեր 1998 թ.ին, Երևանում:

Մասնակցեցին 200 ոսկերիչներ Բելգիայից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Հունաստանից, Իսրայելից, Լիբանանից, Ավստրիայից, և անշուշտ Երևանում գործող ոսկերչական արդյունաբերության գործարարներ: Այդ օրվանից, մեր միությունը ընդարձակվեց և հիմա ունենք ավելի քան 1600 անդամներ AJA-ի 20 մասնաճյուղերում՝ աշխարհի չորս ծագերում...: Ա.Մ.Ն.ի արևելյան և արևմտյան ափերում, Եվրոպայում, Մերձավոր Արևելքում և Հայաստանում AJA-ը համահայկական առաջին մասնագիտացված կազմակերպություններից է: Միության նպատակը ներքաշել է հայկական ժառանգության հիմունքների վրայ՝ տարբեր գործարարական և նախաձեռնողական ուժեր, նաև անդամների փորձը՝ զարգացնելու կապն ու համագործակցությունը: ... Խթանել և օգնել հայկական ոսկերչության բիզնեսների զարգացմանը և տարածմանը ամբողջ աշխարհում:

**ՀԱՐՑՈՒՄ.-** *Ի՞նչպես եք տեսնում աշխարհում հայկական ոսկերչության արդյունաբերության իրավիճակը:*

**ՊԱՏԱՍԽԱՆ.-** Միայն մի քանի ազգեր կան որոնք հռչակված են իրենց որակյալ ոսկերիչներով և Հայաստանը նրանցից է: Պատահականությունն է որ Համաշխարհային Ոսկերչական Համադաշնակցության (IBJO) նախագահ Կատեանո Կավալիերին բարձր գնահատեց հայկական ոսկերչությունը և իր ներկայությամբ պատվեց AJA-ի 15ամյակին նվիրված հանդիսությունը և միջազգային ոսկերչական երկրորդ ցուցահանդեսը Երևանում: Ան գովաբանեց հայ ոսկերիչների արհեստավարժ աշխատանքը, շեշտելով թե Հայաստանը մեծ պոտենցիալ ունի ստանձնելու համաշխարհային ոսկերչական արդյունաբերության ղեկավար դիրքերից մեկը: Պարոն Կավալիերին նշեց նաև որ Հայաստանի եզակի աշխարհագրական դիրքը՝ կարող է կապել Ասիան՝ Եվրոպայի հետ և այս՝ լուրջ կարելիություններ են:

Որպես փաստ, աշխարհի ոսկերչական արտադրության 6-ից 8 տոկոսը պատկանում է հայ արհեստավարժներին:

Ի միջի այլոց, Հայաստանը միակ երկիրն է ուր տոնում են Ոսկերիչի տոնը՝ Հոկտեմբերի վերջին Կիրակին...:

Հիմա՝ AJA-ի մասնագետները աշխատում են Հայաստանում ոսկերչության ազատ գոտու ստեղծման համար, որն կարելի է դարձնում մրցակցելու Չինաստանի, Հնդկաստանի և այլ զարգացած ոսկերչական արդյունաբերություն ունեցող երկրների հետ:

Հայ ոսկերչության ժառանգությունը թերևս շատ խորն է ու մեր ցանկացածի չափ հին և հարուստ AJA-ի հիմնարկի նպատակներից մեկը հետազոտել է հայկական ոսկերչության հարուստ պատմությունը: Այդ մինչև հիմա ամբողջությամբ չի մատենագրվել: Հայտնաբերելու հետաքրքիր փաստեր, որոնք հայ ոսկերիչներին տեղադրեցին

արդյունաբերության առաջին շարքերում, դարեր շարունակ: Օրինակ, Եվրոպայի ամենից շքեղ գահը, թանկագին գոհարներով և մետաղներով զարդարված՝ պատկանում էր Ռուսաստանի Ձարին՝ որպես հարգանք Նոր Ջուղայի (Իրան) հայերից՝ որոնք առանձնահատուկ առևտրական առանձնաշնորհումներ ունեին կայսրության հետ: Գոհարների մեծամասնությունը որ Օսմանյան սուլթաններ նվիրել էին Եվրոպայի և այլ ազնվականների, դիվանագետների և այլ ազդեցիկ անձնավորությունների՝ հայ վարպետների կողմից էին պատրաստվել:

**ՀԱՐՑՈՒՄ.-** Հայ ոսկերիչները Թուրքիայում ճգնվել էին մեծ կապիտալի կողմից և ետ էին մնացել բնագավառում: Ի՞նչ եք կարծում տեխնոլոգիաների զարգացման մասին այս դաշտում:

**ՊԱՏԱՍԽԱՆ.-** Անշուշտ վերջին տասնամյակում և տնտեսական որոշ դժվարությունների պատճառով բազմաթիվ մարտահրավերներ եղել էին արդյունաբերական ամբողջ մարզին համար: Դժբախտաբար՝ վերջին տարիների տնտեսական ճգնաժամը բացասական ազդեցություն է թողել ոսկերչությամբ զբաղվող գործարարների վրա և շատերին թուլացրել է՝ ոչ միայն Թուրքիայում:

Հակառակ այս իրավիճակին, հավատացած եմ որ մանավանդ մենք՝ հայերս, հաղթահարելու ենք այդ պատենշները AJA-ը, միացնելով հայ ոսկերիչներին, պիտի խթանի այդ ճարտարարվեստի զարգացմանը:

Այս օրերում, տեխնոլոգիական զարգացումը հստակ երևույթ է, որն մենք չենք կարող աչքաթող անել: Օրինակ, մենք դիմագրավում ենք նանոտեխնոլոգիան՝ նույնիսկ թանկագին քարերի մշակման մեջ: Մեր խորհրդի անդամներից մեկը՝ Գագիկ Վարդանյանի ընկերությունը մշակում է նանո-թյուրքվազը Լոս Անջելեսում և փորձում է այն սկսել նաև Հայաստանում ևս:

Արժանի է նշել, որ Պրոֆ. Գ. Վարդանյանը AJA-ի գիտական ուսումնասիրության կենտրոնի գլխավորն է:

Իմ կարծիքով, հակառակ տեխնոլոգիական առաջադիմության՝ ոսկերչական արտադրության որոշ ճյուղեր չեն կարող գոյություն ունենալ առանց դասական ձեռային աշխատանքի՝ որի համար հայ ոսկերիչները Թուրքիայում միշտ հռչակավոր են եղել:

**ՀԱՐՑՈՒՄ.-** Ի՞նչ կարգի ցանց ծրագրում եք ստեղծել հայ ոսկերիչների միջև աշխարհի տարբեր մասերում:

**ՊԱՏԱՍԽԱՆ.-** Իրականում, մենք շատ բան ենք արել խթանելու առևտուրը և այլ առևտրական հարաբերություններ հայ ոսկերիչների միջև: Այնպես որ մեր [www.ajainternational.com](http://www.ajainternational.com) կայքը առիթ է ընծայում մեր անդամներին՝ համացանցով ստանալ ընդհանուր գիտություն՝ կապվելով գործակիցների հետ B2B (բիզնեսը՝ բիզնեսով) աղբյուրով:

Մենք «Երևան Շո» ցուցահանդեսներ կազմակերպեցինք 2011 թ.ից: Անցյալ տարի ցուցահանդեսները նվիրված էին AJA-ի 15-ամյակին: Հ.Հ. նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցեց բացման արարողությանը:

Պետք է հայտնեմ, որ Հայաստանի իշխանությունները նեցուկ են կանգնում AJA-ի բոլոր նախաձեռնություններին: Գլխավոր նպատակը՝ ներդրումներ հրապուրելն է Հայաստանի ոսկերչական բնագավառում մասնավորապես հայկական Սփյուռքից:

Նորից, ցանկանում եմ ուշադրությունը գրավել այդ մեծ ծրագրին, որ AJA-ը նախապատրաստում է Հայաստանի կառավարության հետ համագործակցաբար: Նկատի ունեմ ոսկերչական տնտեսական ազատ գոտիի ստեղծում Հայաստանում: Հավատում եմ որ այդ, պիտի օժանդակի մեր ցանցին:

**ՀԱՐՑՈՒՄ.-** *Դուք կապի մեջ եք Թուրքիայի ու՛՛՛՛՛ ոսկերիչի հետ: Ի՞նչ է Ձեր կարծիքը Թուրքիայի ոսկերչական բնագավառի մասին: Թուրքիայում ուրիշ հայ ոսկերիչներ կա՞ն, որոնք աշխատանքով դուք հետաքրքրված եք:*

**ՊԱՏԱՍԽԱՆ.-** Ինչպես որ նշեցի վերևում, ես մեծապես գնահատում եմ ներդրումն ու հատկանշական դերը թուրքահայ ոսկերիչների, իրենց հարուստ, աշխարհիկ ավանդույթով: Հստակորեն, թրքական ոսկերչության արվեստի նոր չափանիշ ծնվեց հայկական բարձրավանդակի հովերից և հայկական անտառների շնչից... ոսկերչություն, որոնք շշնջացին հայկական և թրքական ավանդույթներ՝ էթնիկ ժառանգությամբ:

Վերջերս, Փետրվարի 23-ին, հայ ոսկերչության սերունցքը հանդիպեց Կոստանդնուպոլսի հայ Պատրիարքարանի դահլիճում, հիմնադրելու AJA-ի մասնաճյուղը:

Հանդիպումը տեղի ունեցավ Կոստանդնուպոլսո Հայոց Պատրիարքի հովանավորության տակ AJA-ի գործադիր տնօրեն Դոկտ. Արտակ Ուդումյանը, մասնակցեց և իր բացման խոսքում ողջունեց պոլսահայ կոլեգաներին՝ AJA-ի ընտանիքին միանալու իրենց նախաձեռնության համար: Այդ հանդիպմանը Գործադիր Խորհուրդ կազմվեց երեք համանախագահներով՝ Հրաչ Արսլանյան, Էֆրեմ Բակ և Քենդիր Ավետիս:

Մենք ուրախ ենք որ հիմա ավելի քան 300 լավ կազմակերպված և որակավոր պոլսահայ ոսկերիչներ կան AJA-ի ընտանիքում:

Պատասխանելու համար ձեր հարցին՝ Թուրքիայի հայ ոսկերիչներից ո՞ւմ աշխատանքը հետաքրքրում է ինձ՝ ես կուզենայի նշել Սևան Բիչաքչիի , ում անձնական, հատկանշական հավաքածուները ավելի քան 10 տարի ներքաշում են հավաքածուների տերերին և նշանավոր վաճառատուներին:

Ուրիշ եզակի արհեստավարժ երիտասարդ թրքահայ արհեստավոր է Ավետիս Քենդիրը:

Նրա ստեղծած գոհարները բարձր են գնահատվել քաղաքագետների և հռչակավոր անձնավորությունների կողմից, բնեռից բնեռ: Անգլիո թագուհի Էլիզաբեթ Բ.ը, Մադլեն Օլբրայտը, Կոնդոլիզա Ռայսը, Միշել Օբաման, Էլիզաբեթ Թեյլորը, Բարբարա Սթրեյչդենդը և ուրիշներ:

**ՀԱՐՑՈՒՄ.-** *Իսկ Փարիզի ցուցահանդեսի մասին կարո՞ղ եք մի քիչ պատմել: Ինչպե՞ս տեղի ունեցավ այն:*

**ՊԱՏԱՍԽԱՆ.-** Co/Art Haute Joillere, Հայերի վարպետությունը ցուցահանդեսը կազմակերպվել էր Ֆրանսիայի Հայ Ոսկերիչների Միության կողմից՝ հովանավորությամբ Նորին Գերագանցություն Շառլ Ազնավուրի, UNESCO-ի մոտ Հայաստանի պատվավոր դեսպան: Այն տեղի ունեցավ Փետրվարի 16-ից 18՝ Փարիզում:

Ցուցահանդեսը շատ մեծ հաջողություն ունեցավ, 23 ցուցադրողներով՝ Հայաստանից և Սփյուռքից: Ներկայացվեցին բարձր ոսկերչության բացառիկ ստեղծագործություններ, որոնք ապշեցրեցին գեղեցկության երկրպագուներին՝ երեք օրեր շարունակ:

Շաբաթ, 16-ին, «Գրանդ Օթել»ի Օպերայի դահլիճում տեղի ունեցավ բացման հանդիսությունը՝ Կալա ճաշկերույթով ու երաժշտական ծրագրով: Արարողությանը մասնակցեցին բարձրաստիճան և պատվավոր հյուրեր աշխարհի բոլոր կողմերից: Հ.Հ. դեսպանը Ֆրանսիայում Պրն. Վիգեն Չիտեչյանը: Ֆրանսիայում Ուկրաինայի դեսպան Պարոն Ալեքսանդր Կուլաշիշինը, Բելառուսի և UNESCOի դեսպան պարոն Լացուշկոն և Փարիզի հայկական համայնքի կարևոր անդամներից մեկը՝ ֆիլմարտադրիչ և «Սեզար» ակադեմիայի նախագահ՝ Պարոն Ալեն Թերգյանը, համաշխարհային Ոսկերչական Կազմակերպության ղեկավար անդամ պարոն Արամ Շիշմանյանը և ուրիշներ:

Բազմաթիվ մասնակիցներ հարթակ բարձրացան՝ իրենց գոհունակությունը հայտնելու այսպիսի բա՛րձր համբավ ունեցող ցուցահանդեսին մասնակցելու համար:

3-օրյա իրադարձությունը հատուկ էր, մանավանդ որ Փարիզյան բարձր հասարակությունը մեծ առիթ ունեցավ հիանալու տաղանդավոր հայերի ստեղծագործություններով:

Այս ցուցահանդեսի շրջանակներում, Հայ Ոսկերիչների Միությունը ներկայացրեց աշխարհի ամենաթանկ ադամանդը՝ որին գինն է 15 միլիոն ամերիկյան դոլար: Ադամանդի տերը, HB ընկերությանց խմբի սեփականատեր Հակոբ Բարդաղյանն է: Հայ ոսկերիչները աշխատել էին 110 կարադանոց գլուխ-գործոց վրա 9 ամիս շարունակ...:

**ՀԱՐՑՈՒՄ.-** *Վարպետ-աշկերտ հարաբերությունը, որն ավանդական է, կարևոր դեր է խաղացել հայ ոսկերչական արտադրությունում: Վերջերս այն սկսել է կորչել: Դուք որևէ քայլերի ձեռնարկո՞ւմ եք՝ արգիլելու այդ ավանդության կորուստը:*

**ՊԱՏԱՍԽԱՆ.-** Վարպետ-աշկերտ հարաբերությունը բոլոր շրջանակների կարևոր մասն է, մասնավորաբար ոսկերչական արվեստում:

Հնագույն ժամանակներից մարդիկ կիսել են իրենց փորձն ու գիտությունը՝ սերնդից-սերունդ: Հայերի սերունդերի միջև կապը միշտ եղել է շատ ուժեղ: Այս վերաբերվում է նաև վարպետ-աշկերտ փորձառությանը, փոխանցվելով սերնդից-սերունդ: Այդ արտոնում է, որ մենք՝ հայկական ոսկերչության մասնավոր հատկանիշ պահպանենք, ճանաչելի բոլոր աշխարհում:

Հայկական ոսկերչությունը ոչ միայն թանկագին մետաղներից և քարերից գեղեցիկ պատրաստված իրեր են՝ այլ ներշնչանք են ու հայ ժողովրդի դարավոր մշակույթը փոխանցել են սերնդից-սերունդ: Այն ամբողջապես արտացոլում է մշակույթը մեր ժողովրդի: Հայերը հռչակված են եղել իրենց ոսկերչությամբ՝ հնագույն ժամանակներից: Երեբունիի, Մեծամորի հնագիտական պեղումներում գտնվել են բազմաթիվ գոհարներ, ոսկերչական ոսկյա և արծաթյա իրեր, պաշտամունքի առարկաներ, որոնք հաճույք են պատճառում իրենց գեղեցկությամբ և կատարելությամբ: Հայ կանայք ավանդաբար կրել են արծաթյա և ոսկյա շքեղ գոտիներ, կոճակներ, գլխազարդեր, վզնոցներ և մատանիներ:

AJA-ը նաև զարգացնում է ոսկերչական դպրոցների ծրագիրը, որն հաջողությամբ է իրականացվում Արցախում և Հայաստանում, Ռուսաստանի տարբեր մասերում: Մենք ընդլայնելու ենք այս շարժումը:

Որպեսզի պահպանի և փոխանցի մեր հարուստ ավանդույթները և նախապատրաստի երիտասարդ հայ ոսկերիչներ, AJA-ը հիմնեց մի քանի վերապատրաստման կենտրոններ, Հայաստանում և Արցախում, ինչպես նաև Ռուսաստանում, 20 երիտասարդ արհեստավարժներով՝ որոնք սովորում են: Մենք մի քանի երիտասարդ ոսկերիչների ներկայացրել ենք «Երևան Շո» 2012թ.ին և պիտի շարունակենք այս փորձը: Այսպիսի ուշադրությունը նրանց ճանապարհ է բացում տաղանդավոր հայ արհեստավորներին՝ արհեստավարժությամբ առաջադիմել և խթանել ավելի ստեղծագործական զարգացում:

Մեր նախապատրաստական կենտրոնների աշխատանքը ցույց է տալիս որ եթե պայմաններ ստեղծվեն, մեր երիտասարդ հայ ոսկերիչները զարմացնելու են աշխարհին...: Ես անկեղծորեն հավատում եմ...

